

կը զատուին ու կը հալին , և հալոցին վրայ եղած ուրիշ ընդունարանի մը մէջ կը հաւաքուին : Խրբոր հալոցը կը լեցուի , աւազէ կաղպարներու մէջ կամ ձուլարանին յատակը երկայն եր կայն փորուածքներու մէջ կը վաղցը նեն : Ա ատ անգամ ան հալած երկա թը նորէն նորէն հալեցընելով՝ աւելի կը զտեն . նմանապէս մէկալ հողախառն աղտը նորէն հալեցընելով՝ որչափ որ կարելի է կը մաքրեն , և անկէ ալ մնացած աղտը այլեայլ ձեւերով կը թափեն , և ուրիշ արհեստներու կամ տնական գործիքներու մէջ կը բանեցընեն . զոր օրինակ անով կը շինեն պտուկներ , ուումքեր , թնդանօթներ , երկըթէ կամուրջներ , երկըթէ ճամբաներ , գմբէթներ և այլն : Իսկ պէտ աղտոտ երկաթը այսչափ զանազան բաներու պէտք կ'ըլլայ , բայց ասկէ աւելի բանի եկողը մաքուր երկաթն է : Իսկ մաքուր երկաթը պողպատընելու համար՝ աղիւսէ սնտուկներու մէջ կը շարեն՝ կարգ մը ածուխի փոշի ու կարգ մը երկաթ դնելով , ու կը նային որ սաստիկ տաք ըլլայ միակերպ երկար ատեն . ասով շատ աւելի կը մաքուր երկաթը , ու աւելի յարմար կ'ըլլայ ծեծելու և խարտելու . ջուր ալ տրուի նէ՝ վերջի սատիշանի խտութիւն ու առաձգութիւն կ'առնէ : Պողպատը կտոր կտոր ըրած՝ երբոր նորէն հալեցընես սաստիկ տաքութեամբ ու փշելով՝ կ'ըլլայ թափծու պողպատ , որ շատ յարմար է կոկուելու և արծնելու . ասկէ կը շինուին ածելիները , աշէկմելինները պողպատէ զարդերը :

Դաղղիայի ձուլարաններէն տարին եօթանասուն միլիոն ֆրանքի երկաթիւելլէ . Ինգղիայի ձուլարաններէն հարիւր միլիոնէն աւելի . իսկ բոլոր յւրոպայէն ամէն տարի ելած երկաթին գինը իրեքհարիւր միլիոն ֆուանէն աւելի է կ'ըսեն :

¹ Փարիզու մէջ հարիւր քիլոկրամ երկըթին բն է 22 ֆրանք : Անդքա շատ աւելի աժան է :

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ


|| Անգեղջւար :

ՓՆՀՆ ԵՄԿ ԿԵՆԴԱՆԵԱՋ ՄԷՋ ԱՄԵՆՔՆ ՈՒԺՈՎԸ ՈՒ ՄԵԾԸ ԱՍ Է , և կը գըտնուի Միայի ու Միքրիկէի խիստ տաք կողմերը : Խրկայնութիւնը սովորաբար տասուերկու ոտնաչափ կ'ըլլայ , բարձրութիւնը վեց կամ եօթը . ուստի թէպէտ փղին չափ կրնայ ըսուիլ , բայց ասոր ոտուըները աւելի կարծըլլալով՝ փղին պղտի կ'երենայ : Իսկ մէկալ յատկութիւններուն կողմանէ բոլորովին տարբեր է փղին . պատիճի տեղ գունչ մը ունի շարժուն , որով հաղիւ մէկքանի գործողութիւն կը նայել : Իր մէկ հատիկ զէնքը քթին վրայի եղիւրն է . աս եղիւրը երբեմն ինչուան իրեք ոտնաչափ երկայնութիւն կ'ունենայ , և ասով ինչ և իցէ գազանի դէմ կը կոուըտի : Հնդկաստան շատ մեծամեծներ աս եղիւրէն շինած գաւաթով կը խմեն ամէն բան , կարծելով թէ ան ըմպելիքին մէջ թզն գտնուելու ըլլայ նէ , զօրութիւնը կը կտրի . բայց ասիկայ փուծ կարծիք է :

Ինգեղիւրին բոլոր մարմինը կոշտ ու ջղոտ կաշիով մը ծածկած է . ան ալ վզին և ոտուըներուն վրայ խոչոր խոշոր ծալքեր ունի , և անանկ հաստ է որ ոչ թրով կը կտրուի , և ոչ տէգով կը ծակուի : Միայն հրացանի մեծ երկըթէ գնտակով կրնայ վնասուիլ , մանաւանդ ան ծալքերուն մէջտեղուանքն ու փորուն տակը , որ հասարակ մնի գունով են . իսկ կապարէ գնտակը կը տափկի ու զեն մը չկրնար ընել իրեն :

Ինութեամբ հեղ ու հանդարտ է ունգեղիւրը . բայց թէ որ մէկը վրան վազէ կամ գրգռէ նէ , չարաչար կը կատղի , և երբեմն այնչափ կը սրգողի որ ճար ըլլար զինքը հանդարտեցընե-

¹ Լատ . և Գլ . յունական բառով Rhinocéros .
ՏՃ . ու անգլ . ինգլ . բառ :



Ոնդեղիւր :

լու : Ինդհանրապէս փղին բնութիւնները ունի . բայց խոզի պէս ալ ցեխի մէջ կը տապըլտըկի : Իսկ ձայնը հորժու ձայն կը նմանի : Առվորական կերածը խոտ ու գարի կամ բրինծ է , բայց փշոտ խոտեր աւելի կը սիրէ :

Ոնդեղիւրին աչուցները մանր են , անանկ ալ դիրք ունին որ միայն շիտակ առջեն եղածը կը տեսնէ : Ինորներհակ՝ հոտառութիւնն ու ականջը սաստիկ սուր է . և ինչուան քունին մէջ ալ պղտիկ ձայն մը ըլլայ նէ՝ մէկն գլուխը կը տնկէ , ուշադրութք մտիկ կ'ընէ ինչուան որ ան ձայնը անցնի :

Իսանկ անձուսնի խոշոր կենդանին՝ կ'ըսեն թէ խիստ շուտ կը քալէ ու կը վազէ . ամենսեին արգելք չնայիր , վըրայի կարծը ու պինդ կաշխովը , և քթին վրայի եղջիւրովը ամէն մանր ծառերը փայտերը կը ծուէ կ'անցնի :

Իսիացիք տեղ տեղ կ'ընտանեցընեն ոնդեղիւրն ու պատերազմի մէջ կը բանեցընեն՝ թշնամիները վախցընելու համար . բայց աս կենդանին ինչպէս որ դժուար կ'ընտանենայ , ասանկ ալ պատերազմի ատեն շատ անգամ օգուտ ընելու տեղը վսաս կ'ընէ , ու իր տէրերուն վրայ կը վազէ : Ացրիկեցիք ոնդեղիւրին միսը

կ'ուտեն , ու համն ալ կը գովեն . կա-
շին ու եղջիւրն ալ զանազան բանե-
րու կը բերեն :

Անգեղջիւրին մէկ տեսակն ալ կայ
որ երկու եղջիւր կ'ունենայ քթին
վրայ՝ մէկը մէկալէն պատիկ , և ասի-
կայ Ացրիկէ միայն կը գտնուի :

Ո՞ր Հետներուն բնութիւնը :

Բ .

Բարութական վրայ գրող մատե-
նագիրներ դիտած են , որ մարդ-
կային ձարտարմութիւնը սրելու հա-
մար՝ Աստուծոյ նախախնամութիւնը
կարդ դրեր է , որ մեր ամէն օրուան
կերակուրը առանց ծանր նեղութե-
ու աշխատութեան չպատրաստուի :
Ոյտչուններու և անասուններու որ-
սորդութիւնը , ձկնորսութեան տե-
սակ տեսակ արուեստները , ու եր-
կրագործութեան այլ և այլ կերպերը ,
հարկաւոր զբաղանքներ են՝ որ անով
շատ մարդիկ իրենց գործք մը կը գրտ-
նեն : Ոյտէ որ անասուններուն վրայ
նայինք , կը տեսնենք որ ամէն մէկը
սաստիկ աշխատանքով կ'անցընեն
կեանքերնին , որպէս զի իրենց կամ
իրենց ձագերուն համար հարկաւոր
ապրուստը ձարեն : Իրենց բոլոր զբա-
ղանքն է իրենք զիրենք պահել : Ուս-
տի դատարկ մարդը աշխարհքիս մէջ
հրէշ մըն է : Չորս դին բոլոր բնու-
թիւնը գործքի հետ է . ամէն կեն-
դանի այնպիսի մարդը կը յանդիմա-
նեն . Այնպիսի մարդն որ ուրիշ-
ներուն վրայ ընկած բեռ մըն է , որ
ոչ հասարակաց հարստութիւնն ա-
ւելցընելու հոգ ունի , և ոչ զինքը ու
իր ընտանիքը պահելու հոգ ունի ,
թող նայի թէ նախախնամութիւնը
մըջիւնին ինչ բնութիւն տուեր է ,
որ բանական կենդանիներու օրինակ
կ'ըլլայ : Աս բանս անցեալ շաբթուան
տետրին մէջը բացատրած է զարմա-

նալի կերպով . ան պատմութեան մնա-
ցածն ալ՝ աս ետեի ըսելիքս է :

Հորեննոցն որ գոցեցի , իմմըջիւն-
ներս իրենց ապրուստը գանելու հա-
մար նեղը մտան . վասն զի իրենց պա-
շարը ան ցորեննոցէն կը հոգային :
Ա երջապէս տեսնելով որ իրենց հա-
մար զիզած ցորենս դեռ երկան ատեն
պէտք էր որ գտնէին , միտքս դրի որ
իրենց իմացընեմ :

Որպէս զի իմանամ թէ որչափի կը
հասնի ասոնց ձարտարմութիւնը ,
հնարք մը մտածեցի՝ որ լաւ յաջողե-
ցաւ : Իանը անհաւատալի կ'երենայ
անոնց որ չեն գիտեր՝ թէ ան կենդա-
նիներն որ նոյն տեսակէն ընկերու-
թեամբ կ'ապրին , ուրիշ կենդանինե-
րէն աւելի աչքաբաց են : Աւելի մեծ
մըջիւններէն մէկն առի , ու ցորենի
դէզին վրայ ձգեցի . Այնչափ ուրա-
խացաւ ձեռքէս ազատելուն վրայ , որ
առանց ցորեն մը առնելու մէկէն իր
բոյնը վազեց . բայց հոն ցորեն ըլլալը
դիտեր է . վասն զի ժամէ մը ետե բոլոր
իմմըջիւններս հոն իրենց պաշար ըլ-
լալը իմացեր էին . և տեսայ որ շատե-
րը հոն դրած ցորենս կրելու զբաղած
էին : Վեզի կը թողում մտածել՝ թէ
արգեօք չենք կրնար ըսել որ իրենց
ծանօթութիւնը իրարու իմացըներու
ձամբայ մը ունին . չէ նէ ինչպէս մէկ
կամ երկու ժամէն ետե կրնային ի-
մանալ որ հոն տեղը ցորեն կայ : Հո-
րենը շուտ մը լմբնցաւ . ես ալ նորէն
դրի , բայց աւելի քիչ՝ որպէս զի լաւ
իմանամ թէ իրենց բուն ախորժը ,
կամ հրաշալի ագահութիւնը որչափ
է . վասն զի չեմ տարակուսիր որ ձմե-
ռուան համար ալ պաշար կը դիզէն :
Ուրիք գըքին մէջ ալ կը կարդանք նոյն
բանը . բիւրաւոր փորձեր ալ նոյն բա-
նը կը սորվեցընեն , և չեմ կարծեր որ
մէկը փորձ մը ըրած ըլլայ՝ որ հակա-
ռակը ցուցընէ :

Աւաջ ըսի թէ ան մնտուկին կամ
պարտէզիկին մէջը մըջիւնի իրեք բոյն
կար , որ կրնանք ըսել թէ իրեք այլ և
այլ քաղաքներ էին . կառավարութէ